

պատմութիւնն ինքը Սամուէլ վ. գրած է Հոռ-
մէն 5 Յունիս 1773 թուակիր նամակով առ
Սարգիս Արքեպ.: Այս նամակս ամբողջապէս կը
դնեմ այստեղ, իր ստորագրութեան իսկական
նմանահանութեամբը:

Է.

Խոնկեսագգօնի մեծի եղբորդ Խոնց ի Բրիտանո Տեսունդ
Սարգիս Եստոռածարան վարդապետիդ յամենայն
սրտե կարօտիւ ողջան եւ սէր համարածայեմ ողջ
կերոյդ ի Տէր:

Եւ զկնի եղբայրական սիրոյ ողջունիւս, եւ
հարցանելոյ օրհնեալ կենացդ, եւ որպիսութենէ ի
ներկայումս թէ հիպէս կեաս, եւ վարեա զմնացեալ
կեանս քո, ահ զինչ ասեմ Աստուծոյ յանձին զքեզ
եւ զմեզ, ի ներթշուառութեան աշխարհիս որ լի է
խաբէութեամբ եւ սուութեամբ եւ այլն: Արդ սիրելի
իմ եթէ զորպիսութեան ելն մեր հարցանել կամիս
լուր: ՌՄԻԱին (= 1772), Նոյեմբերի 3 ելաք ի
Պրուսալու եւ հասաք ի մեծն փօլիս. ուղղապէս
գնացի ի պատրիարքարանն բոլոր ընչիւք իմովք,
եւ մինչեւ ի օր որքան կարն մեր բաւէր գրեանքս
եազմա սակաւ առ սակաւ վերուցի ոչ ոք իմանա-
լով. եւ պասմա գրեանքս Բ սնտուկի մէջ թողե-
լով, եւ այլ էշեայք ի սուրբ Երուսաղեմայ վէքիլի
օթարանն քարէ օտան, եւ հրամանաւ պատրիար-
քին եւ Գասպար ամիրաին գնացի ի տեսութիւն
բոլոր բարեկամաց, ամենեւին ոչ նշան տալով: Աս-
տուծով Դեկտեմբերի 4ին ի խուռուչէշմէէն, այս-
ինքն ի տանէ Պետրոս ամիրաին ելի եւ ուղիղ ելա
ի խզխուլէն, եւ անտի մտա ի նաւն, եւ 24 սա-
հաթն հասաք ի պողազ հիսարն եւ անտի առանց
փնասու ելաք, եւ մինչեւ 18 օրն հասաք ի Մալթա
կղզին, եւ անտի ելաք դէպ ի մառչիլիա, բայց հողմն
կարի ընդդէմ գոլով Բ անգամ յետս դարձաք ի